ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ֆիզիկական անձանց Միանվագ դրամական վճարների հաշվի

Հրապարակվել է 01.10.2025թ.

1. Միանվագ դրամական վճարների բացման, սպասարկման և գործառնությունների իրականացման սակագներ

N	Ծառայություն	Սակագին (ՀՀ դրամ)
1.	**Հաշվի բացում**	
	ռեզիդենտ	**անվճար**
2.	**Արժույթ**	
	AMD	
3.	**Տարեկան սպասարկում**	**անվճար**
4.	**Նվազագույն մնացորդ**	**նախատեսված չէ**
5.	**Հաշվի փակում**	**անվճար**
6.	**Կանխիկ միջոցների մուտքագրում հաշվին**	**նախատեսված չէ**
7.	**Միջոցների կանխիկացում**	**անվճար**
8.	**Փոխանցումներ բանկային հաշվից**	**Համաձայն Բանկում գործող սակագների**
9.	**Տեղեկատվական ծառայություններ [1]**	
	Հաճախորդի կողմից նախընտրած եղանակով պարտադիր քաղվածքի տրամադրում առաջին անգամ ցանկացած ժամանակահատվածի համար	անվճար
	Հաճախորդի պահանջով մեկ անգամից ավել քաղվածքի տրամադրում մասնաճյուղում	
	մինչև 1 տարի վաղեմության	**1.900**
	1 տարուց ավել վաղեմության	**3.900**
10.	**Վճարահաշվարկային և այլ փաստաթղթերի պատճեների տրամադրում [2]**	**Համաձայն Բանկում գործող սակագների**
11.	**Տեղեկանքների տրամադրում Բանկի ստանդարտ տիպային ձևով (Ներառյալ ԱԱՀ)**	
	հայերեն լեզվով	**2.900**
	ռուսերեն և անգլերեն լեզուներով	**3.900**
	Հաճախորդի հարկային գործակալից ստացված եկամուտների և այդ եկամուտներից պահված (վճարված) եկամտային հարկի վերաբերյալ տեղեկանք	**անվճար**
	Տեղեկանքների տրամադրում Բանկի ոչ ստանդարտ ձևով [2]	**5.900**
12.	**Հաշվի օրական մնացորդի նկատմամբ կիրառվող տարեկան տոկոսադրույք**	**0.01%**

1 Բանկի պաշտոնական կայքի միջոցով առցանց տեղեկանքների կամ քաղվածքների պատվիրման դեպքում նշված սակագներից նվազեցվում է 900 ՀՀ դրամի չափով:
2 Մատուցված յուրաքանչյուր պրոդուկտի տեսակի շրջանակում:

2. Միանվագ դրամական վճարների հաշվի նկարագրություն, էական դրույթներ

2.1. Միանվագ դրամական վճարների հաշիվը բացվում է ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար ՀՀ դրամ արժույթով:
2.2. Միանվագ դրամական վճարների հաշիվը բացվում է Հաճախորդի անվամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության (այսուհետ՝ Լիազոր մարմին) կողմից տրամադրված Հաճախորդի տվյալների հիման վրա (Անուն, ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթղթի տեսակ, սերիա և համար, հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համար):

2.3. Միանվագ դրամական վճարների հաշվին մուտքագրելու միջոցով վճարվում են ՀՀ օրենքով սահմանված միանվագ բնույթ կրող դրամական վճարների գումարները (երեխայի ծննդյան միանվագ նպաստի գումարները, չաշխատող անձի մայրության նպաստի գումարները և այլ գումարներ):
2.4. Հաճախորդը հաշվետիրոջ իրավունքներ է ձեռքբերում և կարող է տնօրինել Միանվագ դրամական վճարների հաշվին փոխանցված գումարները «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից պատշաճ նույնականացվելու և Բանկի հետ Միանվագ դրամական վճարների հաշվի բացման պայմանագիր կնքելու օրվանից:
2.5. Հաճախորդին վճարվող ՀՀ օրենքով սահմանված բոլոր միանվագ դրամական վճարների գումարները Բանկը մուտքագրում է Հաճախորդի անվամբ Բանկում գործող միևնույն Միանվագ դրամական վճարների հաշվին:
2.6. Միանվագ դրամական վճարների հաշվով կարող են իրականացվել հետևյալ գործառնությունները՝
- ՀՀ օրենքով սահմանված միանվագ բնույթ կրող դրամական վճարների գումարների մուտքագրում և ելքագրում
- փոխանցումներ Բանկի հաշիվների միջև,
- փոխանցումներ ՀՀ տարածքում,
- տեղեկատվական ծառայություններ (քաղվածքներ, տեղեկանքներ),
- այլ գործառնություններ:

2.7. Միանվագ դրամական վճարների հաշվին հաշվեգրվող տարեկան տոկոսադրույքը սահմանվում է 0%, որի փոփոխման վերաբերյալ Բանկը Հաճախորդին տեղեկացնում է վերջինիս կողմից Պայմանագրով նախընտրած ծանուցման եղանակով՝ փոփոխման օրվանից առնվազն 15 օրացուցային օր առաջ: Բանկի կողմից Միանվագ դրամական վճարների հաշվի համար վճարվող տոկոսների չափը նվազեցնելու դեպքում տոկոսների նոր չափը կիրառվում է մինչև Հաճախորդին տոկոսները նվազեցնելու մասին տեղեկացումը՝ համապատասխան հաղորդման օրվանից մեկ ամիս անցնելուց հետո, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
2.8. Միանվագ դրամական վճարների հաշվի Սակագներով սահմանված միջնորդավճարները կամ այլ ծառայության վճարները, առաջնահերթ անվիճելի անակցեպտ կարգով գանձվում են Հաճախորդի ՀՀ դրամով հաշվից/ներից, վերջինիս/ներիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Հաճախորդի գործարքի առարկա հանդիսացող հաշվից/ներից, վերջինիս/ներիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ արտարժույթային այլ հաշվից/ներից, որի արդյունքում արտարժույթի՝ ՀՀ դրամի փոխարկումն իրականացվում է փոխարկման պահին ՀՀ ԿԲ կողմից պաշտոնական կայքում հրապարկված փոխարժեքով:
2.9. Հաճախորդի պահանջով՝ կատարված գործարքների վերաբերյալ հարցման ծառայության վճարը գանձվում է Բանկի Սակագներում այդ նպատակով սահմանված միջնորդավճարների համաձայն:
2.10. Բանկը առաջարկում է նաև հեռահաղորդակցման միջոցներով (էլեկտրոնային միջոցներով) հաշվում եղած դրամական միջոցների տնօրինման հնարավորություններ՝ Mobile/ Internet banking, Հեռախոս Բանկ: Հեռահար սպասարկման պայմաններն ու կարգը՝ https://www.vtb.am/am/online-banking#all:
2.11. Բանկը երաշխավորում է Հաճախորդի կողմից կատարված գործառնությունների գաղտնիությունը՝ համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի:
2.12. Միանվագ դրամական վճարների հաշվի գծով պայմանագրի պայմանների կամ կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման դադարեցման վրա որևէ ազդեցություն ունեցող Բանկի ներքին ակտերի փոփոխման դեպքում, որը կհանգեցնի տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման, Բանկը նոր պայմանների վերաբերյալ տեղեկացնում է Հաճախորդին վերջինիս կողմից ընտրված տարբերակով՝ տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման օրվանից առնվազն 15 օր առաջ:
2.13. **Դուք իրավունք ունեք հաղորդակցվել Բանկի հետ՝ ընտրելով Բանկի կողմից առաջարկվող տարբերակներից Ձեր նախընտրած եղանակը: Այդուհանդերձ, հայտնում ենք, որ էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն ամենահարամարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, վերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիության բարձր մակարդակ:**

3. Միանվագ դրամական վճարների հաշվի վարման կարգ

3.1. Միանվագ դրամական վճարների հաշվին դրամական միջոցների մուտքագրումը և ելքագրումն իրականացվում է մեկ բանկային օրվա ընթացքում:
3.2. Հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում, այդ միջոցները դուրս են գրվում Հաճախորդի կարգադրությունները և դուրս գրման այլ փաստաթղթերը Բանկ մուտք լինելու հաջորդականությամբ (օրացուցային հաջորդականությամբ):
3.3. Այն դեպքում, երբ Հաճախորդի հաշիվներին առկա գումարները բավարար չեն վճարման հանձնարարականը կատարելու և դրա համար սահմանված վճարը գանձելու կամ արտարժույթի փոխանակման գործարքն իրականացնելու համար, հայտը վերադարձվում է Հաճախորդին առանց կատարման, ընդ որում, Բանկը նման դեպքերում պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կարգադրությունը չկատարելու հետևանքով նրա կրած վնասների համար:
3.4. Միանվագ դրամական վճարների հաշվի նկատմամբ ժառանգության ձևակերպումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
3.5. Միանվագ դրամական վճարների հաշվում առկա միջոցները չեն կարող բռնագանձվել կամ գրավադրվել բանկի կողմից, եթե անգամ տվյալ հաշիվը Բանկում հանդիսանում է միակ հաշիվը:
3.6. Միանվագ դրամական վճարների հաշվին մուտքագրված միանվագ դրամական վճարների գումարը վերադարձվում է ՀՀ պետական բյուջե, եթե Հաճախորդը կամ այլ անձը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված 12-ամսյա ժամկետում (մինչև վճարման ցուցակը, այդ թվում՝ Միանվագ դրամական վճարների հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալները բանկին փոխանցելու ամսվանից հաշված 12-րդ ամսվա վերջին աշխատանքային օրը) չի ներկայացրել պահանջ:
3.7. **Հաճախորդը Միանվագ դրամական վճարների հաշվի քաղվածքի ստացման եղանակն ընտրում է հաշվի բացման պահին (էլեկտրոնային փոստով, փոստով, Առցանց հարթակով): Հաճախորդի պահանջով Բանկը պարտավոր է 1 աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս տրամադրել Բանկային հաշվով քաղվածք 1-ին կետի Սակագներին համապատասխան: Բանկը պարտավոր չէ քաղվածք տրամադրել, եթե հաշվետու ժամանակաշրջանում Միանվագ դրամական վճարների հաշվով շարժը բացակայում է (հաշիվը չի դեբետավորվել կամ կրեդիտավորվել):**

4. Միանվագ դրամական վճարների հաշվի փակման կարգ

4.1. Հաճախորդը ցանկացած պահի կարող է փակել Միանվագ դրամական վճարների հաշիվը (լուծել Միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագիրը):
4.2. Հաշիվը փակվում է Հաճախորդի կողմից հաշվի փակման դիմում ներկայացնելու պահին:
4.3. Հաշվին առկա դրամական միջոցների մնացորդը Հաճախորդի հանձնարարությամբ կարող է վճարվել Հաճախորդին կամ փոխանցվել այլ հաշվեհամարի:
4.4. Բանկն իրավունք ունի փակել Հաճախորդի Միանվագ դրամական վճարների հաշիվը առանց նախնական ծանուցման, եթե Հաճախորդի հաշվին առկա դրամական միջոցները 12 (տասներկու) հաջորդական ամիսների ընթացքում չեն իրականացվել որևիցե գործարքներ:

5. Այլ լրացուցիչ պայմաններ

5.1. Սոցիալական ապահովության հաշվի «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց մատուցվող ծառայությունների պայմաններին և կանոններին (ՕՖԵՐՏԱ) կարող եք ծանոթանալ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ պաշտոնական կայքում www.vtb.am («Միանվագ դրամական վճարների» բաժնում):

6. Վեճերի լուծման կարգը

6.1 Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հաճախորդն հնարավորություն ունի Բանկի և իր միջև բխող բողոք-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

6.2 **Տեղեկացնում ենք**, որ Բանկը կնքել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր այն պահանջներով, որոնց ընդհանուր չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի ընդհանուր գումարը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

7. Այլ դրույթներ

7.1. **Հայտարարություն:** Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

7.2. **Հայտարարություն:** Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Ընդ որում, Հաճախորդն իր հաշվից դրամական միջոցների բռնագանձման վերաբերյալ տեղեկացվում է տվյալ հաշվի քաղվածքի միջոցով՝ իր կողմից նախապես ընտրված հաղորդակցման /քաղվածքի ստացման/ եղանակով և կարգով (քաղվածքի ծանուցման եղանակի բացակայության դեպքում՝ փոստով՝ բնակության կամ հաշվառման հասցեով):

7.3. **Ուշադրություն: Բանկը՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով, կարող է Հաճախորդից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին (նման պահանջի առկայության դեպքում):**

7.4. **Ուշադրություն: Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:**

8. Բանկային հաշվի գումարը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից՝ համաձայն «Ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով« և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից պակաս է	Եթե դրամային ավանդը 7միլիոն դրամից ավել է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝7 միլիոն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով)	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
* Նույն բանկում բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ: Համատեղ ավանդը համարվում է առանձին ավանդ՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով:				

* Ավանդ են համարվում նաև ֆիզիկական անձանց կողմից Բանկում բացված բոլոր հաշիվներին/քարտերին գտնվող դրամական միջոցները և դրանց վրա հաշվարկված տոկոսագումարները:

Ծառայության վերաբերյալ ամբողջական տվյալներին կարող եք ծանոթանալ www.vtb.am կայքում, ինչպես նաև վանգահարելով միասնական տեղեկատվական ծառայություն 87 87 հեռախոսահամարով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵՋ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է www.fininfo.am:

Սույն ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել:
Մանրամասների համար կարող եք վանգահարել 8787: